ելը, տեղատարափ անձրևներն ու սարսափելի հեղեղները, որոնք աշխատասէր գիւղացու արտերն ու այգիներն են սրբում-տանում և նրան օրական մի կտոր չոր հացի կարօտ թողնում։ Այս և այսպիսի սոսկալի չարիքների դէմ կռուելու ոչ մի հնար ու միջոց չունի այն դժբախտ ժողովուրդը, որ բացի Նոյ նահապետից մնացած հընադարեան երկրագործական պարապմունքից, ուրիշ ոչինչ չգիտէ։ Այսպիսի մի երկրագործ, աշխատասէր, ժրաջան և պատուական ժողովուրդ այսօր գտնւում է ամենադժբաղդ և անտանելի վիճակի մէջ հետևեալ պատճառով։ Կառավարութիւնը Կովկասում գլխահարկը վերացնելուց յետոյ երբ պետական տուրքերը նշանակեց հողերի վրայ, այն օրից էլ Ուտիացոց երկրի աշխատասէր երկրագործ ժողովրդի արևը խաւարեց։ Ահա թէ ինչպէս։ Կառավարութեան այդ օրէնքի հրատարակուելուց յետոյ պետական հողաբաժինները դեռ ևս չչափած և գիւղական համայնքներին չբաժանած, Բումի ճարպիկ թուրք բէկերը մի խորամանկ խաղ խաղացին միամիտ գիւղացիների գլխին։ Գիւղացիների տգիտութիւնից և պարզամտութիւնից օգտուելով, նրանք իրենց բազմաթիւ ծառաներով ու արբանեակներով մարդիկ պատրաստեցին, որոնք սկսեցին գիւղացոց մոլորեցնել սուտ խոստումներով և ոսկեղէն դատարկ յոյսերով։ Շատերին հաւատացրին, թէ «այս ինչ, այն ինչ պետական հողաբաժինները ցոյց տուէք, որ նրանք բէկական են, այն ժամանակ մենք ձեզանից տասանորդական տուրք չենք